# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

338.14
Կ-21

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
ԲԱԳՈՒ 1934 Թ.

17 MAY 2013

Թարգմ. Կ. ՋԱԼԱԲԻ
Տեխ. խմբ. Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 5396 Типография „III Интернац". Баку, ул Саратовца-Ефимова, № 29. Заказ № 2831. Тираж 4000.

33-Ա
9828
338.14
Կ-21
17 FEB 20..

«Ընդարձակել խորհուրդների սեկցիաների և պատգամավորական խմբակների ցանցը ձեռնարկներում, գյուղերում, իսկ մեծ քաղաքներում կազմակերպել խորհուրդների պատգամավորների յենթաշրջանային և տեղամասային խմբակներ, ընդ սմին առանձին ուշադրություն դարձնել խորհուրդների և նրանց սեկցիաների աշխատանքում կին-ակտիվիստներին, բանվորուհիներին և կոլտնտեսուհիներին ներգրավելու վրա»:

(ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) 17-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԻՑ)

## ԲՈԼՈՐ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
## ԲՈԼՈՐ ՇՐՋԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
## ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
## ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԽՍՀ ՅԵՎ
## Ի. Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԳՈՐԾԿՈՄԻ
## ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

*Ադրկենտգործկոմի նախագահությունը ձեր լուրջ ուշադրությունն է հրավիրում սրան կից տրվող կոլտնտեսություններում խորհուրդների պատգամավորների խմբակների մասին նոր կանոնադրության վրա:*

*17-րդ կուսհամագումարի բանաձևի լույսի տակ պատգամավորական խմբակների կանոնավոր կազմակերպումն ու աշխատանքը կրկնապատիկ քաղաքական նշանակություն ունեն: Պատգամավորական խմբակները կոլտնտեսություններում հանդիսանում են մասսայական աշխատանքի բջիջներ, վորոնց միջոցով խորհուրդներն անմիջականորեն իրագործում են ամենորյա կապն ընտրողների հետ, խորհուրդների անդամներին, խորհրդա-կոլտնտեսային ակտիվը և*

աշխատավորների լայն մասսաներին գրավում են սոցիալիստական շինարարության քաղաքական աշխատանքի և ընկ. Ստալինի տված «կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան, իսկ բոլոր կոլտնտեսականներին ունևոր» խնդրի իրականացման մեջ: Հատկապես իր պատգամավորական խմբակների օգնությամբ գյուղխորհուրդը կարող է և պետք է իրագործի մասսաների իսկական հսկողությունը կոլտնտեսությունների ամբողջ արտադրական գործունեության վրա: Ըստ նոր կանոնադրության, խոշոր կոլտնտեսություններում պատգամավորական խմբակները կազմակերպվում են մշտական արտադրական բրիգադներում: Հենց դրանով գյուղխորհուրդները ընդհուպ են մոտենում անմիջապես կոլտնտեսային բրիգադային:

Պատգամավորական խմբակների վերակառուցումը ու ամրապնդումը — մեր այսօրվա կարևորագույն խնդիր է:

Ադրկենտգործկոմի նախագահությունը պարտավորեցնում է ձեզ, ղեկավարվելով պատգամավորների մասին նոր կանոնադրությամբ —

ա) Հուլիս ամսվա ընթացքում գյուղխորհուրդների պլենումների և նախագահությունների նիստերին, սեկցիաների պլենար նիստերին, կոլտնտեսականների ժողովներին, դաշտում, բրիգադներում, օթևաններում լայն կերպով մշակել նոր կանոնադրությունը պատգամավորների մասին:

բ) Անմիջապես ձեռնարկել պատգամավորական խմբակների վերակառուցման և ամրապնդման, առանձին ուշադրություն դարձնելով պատգամավորական խմբակների աշխատանքի մեջ կին-ակտիվիստների, բանվորուհիների և կոլտնտեսուհիների ներգրավելուն:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

գ) Պատգամավորական խմբակների վերակառուցման և ամրապնդման աշխատանքները շաղկապել գյուղխորհուրդների, շրջգործկոմների աշխատանքի ընդհանուր վերակառուցման և անցկացվող գյուղխորհուրդների համամիութենական կոնկուրս-մրցության հետ, այնպիսի հաշվով, վորպեսզի հուլիս-օգոստոսին ավարտել պատգամավորական խմբակների վերակառուցման և ամրապնդման աշխատանքները:

դ) Վերակառուցման ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել կոլտնտեսություններում խորհկազմակերպիչների ինստիտուտի կազմակերպելու վրա. Խորհկազմակերպիչներ են ընտրվում այն կոլտնտեսություններում, վորտեղ յերկու և ավելի բրիգադային պատգամավորական խմբակներ կան և ղեկավարում են նրանց, ընտրվող խորհկազմակերպիչների թեկնածությունները անհատապես քննվում յեվ հաստատվում են գյուղխորհրդի նախագահության նիստում. Նրանք վարչական վոչ մի իրավունքներով չեն օժտվում:

Ադրկենտգործկոմի նախագահ՝
(Մ. ԵՖԵՆԴԻՅԵՎ)

Ադրկենտգործկոմի քարտուղարի տ.՝
(Գ. ԱԽՈՒՆԴՈՎ)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Ադրկենտգործկոմի նախագահության
1934 թ. հունիսի 19-ի նիստում, արձ.
№ 49, կետ. 12.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոլտնտեսություններում խորհուրդների պատգամավորների խմբակները հանդիսանում են մասսայական աշխատանքի բջիջներ, վորոնց միջոցով խորհուրդները իրականացնում են ամենօրյա կապը ընտրողների հետ, գրավում են խորհուրդների անդամներին, խորհրդա — կոլտնտեսային ակտիվին և աշխատավորության լայն մասսաներին սոցիալիստական շինարարության գործնական աշխատանքի և ընկ. Ստալինի կողմից տրված «կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան, իսկ բոլոր կոլտնտեսականներին ունևոր» խնդրի իրագործման մեջ:

## I. ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄԸ

1. Խորհուրդների պատգամավորական խմբակները կազմակերպվում են կոլտնտեսություններում՝ նրանց մեջ խորհրդի անդամի մեկ (գործկոմի) առկայության դեպքում: Պատգամավորական խմբակների մեջ են մտնում գյուղխորհրդի անդամներն ու թեկնածուները, գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովի անդամները, վերադաս գործկոմի անդամներն ու թեկնածուները, գյուղական խորհրդի սեկ-



ցիաների անդամները, ժողատենակալները, գյուղական համայնական դատարանի անդամները, կոլտնտեսականներ — հարվածայինները, գյուղի կուլտուրական աշխատավորները և գյուղական տնտեսության մասնագետները:

Խոշոր կոլտնտեսություններում պատգամավորական խմբակները կազմակերպվում են մշտական արտադրական բրիգադներում: Այդպիսի պատգամավորական խմբակների աշխատանքը միացվում է ամբողջ կոլտնտեսության պատգամավորական խմբակների ժողովով, վորը անց է կացնում գյուղխորհրդի ջոկած խորհկազմակերպիչը: Պատգամավորական խմբակների անհատական կազմը և խորհկազմակերպիչներին հաստատում է գյուղական խորհուրդը:

2. Պատգամավորական խմբակը կազմակերպվում է գյուղխորհրդի լիազորության ժամկետի շրջանում. պատգամավորական խմբակների անդամները խորհըրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են կոլտնտեսության վարչության բոլոր նիստերում, սպառողական կոոպերացիայի և գյուղխորհրդի իրավասության տակ գտնվող օրգանների նիստերին:

3. Պատգամավորական խմբակների ղեկավարները առաջ են քաշվում գյուղխորհուրդների կողմից, խմբակի կազմի անդամներից և ազատվում են խորհուրդում վորևէ ուրիշ բեռնավորում տանելուց:

4. Աշխատանքի հաշվետվության համար խմբակի կողմից ընտրվում է քարտուղար:

## II ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պատգամավորական խմբակները, կատարելով իրենց աշխատանքի մեջ գյուղխորհրդի ցուցմունքները և կուսակցական և խորհրդային օրգանների դիրեկ-

ավմները, անց են կացնում հետևյալ միջոցառումները:

1. Բացատրում են աշխատավորների լայն մասսաներին կուսակցության, կառավարության և տեղական խորհրդային օրգանների վորոշումները՝ կազմակերպելով մասսաներին նրանց իրագործման շուրջը և նրանց վրա հսկողություն ունենալու համար, աջակցում են բյուրոկրատիզմի և քաշքշուկների դեմ տարվող պայքարին:

2. Մոբիլիզացիայի յեն յենթարկում կոլխոզնիկներին՝ կոլխոզային շինարարության կուլակային ընդդիմադրության՝ տարվող պայքարում, թույլ չտալով կուլակային տարրերին կոլխոզներում ներս խցկվելուն և ջախջախելով դասակարգային թշնամու ամենայն տեսակի փորձերը՝ վորոնք ուղղված են կոլտնտեսությունների արտադրությունը քայքայելու, և կոլտնտեսությունների կողմից պրոլետարական պետության առաջ իրենց պարտականությունները կատարելու դեմ.

3. Աջակցում են կոլտնտեսությունների վարչություններին իր ժամանակին կատարել պետության առաջ իրենց պարտականությունները՝ գյուղատնտեսական մթերքներ մատակարարելու, ֆինանսային վճարումների և կոլտնտեսությունների կողմից մեքենա-տրակտորային կայանների, անտառային և կոոպերատիվ տնտեսական կազմակերպությունների առաջ իրենց վրա արած պարտավորությունների կատարելուն:

4. Մշակում են կոլտնտեսության արտադրական-ֆինանսական պլանները, մասնակցում են պլանը մինչև արտադրական բրիգադները, օղակները և ապրանքային ֆերմաները հասցնելուն, յերևան հանելով տնտեսության ներսի բոլոր հնարավորությունները պլանների հաջող կատարման համար:



5. Կազմակերպում են կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների լայն մասսաներին արտադրական-ֆինանսական (ցանք, բերքահավաք) պլանների կատարման և գերակատարման շուրջը՝ սոցիալիստական մրցման, հարվածայնության և պատգամավորների ու խմբակի բոլոր անդամների անձնական օրինակի ցուցաբերելու հիման վրա:

6. Կոլտնտեսություններում գործնական աշխատանք են անցկացնում բերքի բարձրացման համար, պայքարելով ճիշտ ցանքափոխություն մտցնելու և ամրապնդելու համար, ցանքը իր ժամանակին կատարելու, ագրոտեխնիկական բոլոր միջոցառումների անցկացնելու և բերքահավաքի ժամանակ կորուստների դեմ պայքարելու միջոցների համար:

7. Աջակցում են կայուն հողօգտագործման ամրապնդելու, հողամասերը տնտեսական-նպատակահամար օգտագործելու, մելիորատիվ և կուլտուրա-տնտեսական միջոցառումների անցկացնելուն:

8. Աջակցում են սոցիալիստական անասնապահության զարգացնելու միջոցառումների անցկացնելուն (կերային բազայի ամրացում, պայքար կոլտնտեսային ամուր ձիու համար, ցեղային անասունների աճեցնելու, անասուններին լավագույն խնամելու, անասնաշենքեր կառուցելու, մատղաշի պահպանելու, կոլտնտեսականների կողմից հորթեր և կովեր ձեռք բերելուն, ամենայն կերպ խոշոր ու մանր անասունների հոտի ընդլայնելու) վճռական պայքար են մղում անտնտեսավարության և դեպի կենդանի քարշուժը յեղած անհոգատար վերաբերմունքի դեմ:

9. Աշխատանք են տանում կոլեկտիվ սոցիալիստական սեփականության ամրապնդման, աջակցելով նրա պաշտպանության կազմակերպելուն և օգնում են կոլտնտեսությունների վարչություններին և պետա-

կան որգաններին՝ կոլտնտեսությունների ունեցվածքի հափշտակողների դեմ տարվող պայքարին:

10. Մասսայական միջոցառումներ են անցկացնում աշխկարգապահության ամրապնդելու և աշխատանքի արտադրողականությունն բարձրացնելու համար, սոցմրցության, հարվածայնության, խմբակի անդամների կողմից հարվածային աշխատանքի և աշխկարգապահության անձնական օրինակի ցուցաբերման ծավալելու հիման վրա. համառ պայքար են մղում կոլտնտեսությունների և բրիգադների մեջ սոցմրցման պայմանագրերի և պարտականությունների կատարման համար:

Աջակցում են մշտական բրիգադների ամրապնդմանը, բանուժի կանոնավոր բաշխմանը, մեքենաների, ինվենտարի, կանանց աշխատանքի լրիվին օգտագործմանը և անդեմության վերացմանը: Պայքար են մղում լոդրերի, գործալքողների, գջլողների և կոլտնտեսային արտադրության մյուս կազմալուծողների դեմ:

11. Աջակցում են հաշվառքի, հաշվեպահության կանոնավոր դրվելուն, հաշվեպահության և յեկամտի բաշխմանը՝ ըստ ամեն մի կոլտնտեսականի աշխատանքի քանակի և վորակի, հսկում են բոլոր բնաֆոնդերի անեղծման ճշտությանը:

12. Օգնում են կոլտնտեսությունների և սպառողական կոոպերացիայի վարչություններին՝ ապրանքաշրջանառության, խորհրդային և կոլտնտեսային առևտրի ծավալելուն:

13. Աջակցում են արտադրական խորհրդակցությունների կազմակերպելուն, մասնակցում են նրանց աշխատանքներին, մշակում են կոլտնտեսային արտադրության բարելավման (ռացիոնալիզացիայի) հարցերը, նրա առանձին պրոցեսները, արտադրողականության



բարձրացումը գյուղական — տնտեսության մեքենաների ու գործիքների աշխատանքի մեջ:

14. Աջակցում են գյուղխորհրդին բարեկարգման՝, ճանապարհային շինարարության, ջրամատակարարման և հակահրդեհային պահպանության աշխատանքների տանելուն:

15. Կոլեկտիվ տնտեսություն տանելու առավելությունները ցույց տալու հիման վրա, մասսայական աշխատանք են տանում կոլտնտեսություններում ներգրավելու չքավոր — միջակային մասսաներին, մենատնտեսների մեջ մասսայական աշխատանք տանելու միջոցով, կազմակերպելով որապահություն-կոնսուլտացիա նվիրված կոլտնտեսային հարցերին, ցուցահանդեսներ կազմակերպելով և այլն:

16. Կուլտուր — կենցաղային շինարարության բնագավառում պատգամավորական խմբակները —

ա) Կոլտնտեսայիններին դրդում են ագրոտեխնիկայի տիրապետելու և գյուղատնտեսական մեքենաների ուսումնասիրելու, մասնակցում են բոլոր տեսակի ուսման կազմակերպման գործում, վորը բարձրացնում է կոլտնտեսականների ընդհանուր քաղաքական մակարդակը և արտադրական վորակավորումը:

բ) Աջակցում են ընդհանուր տարրական կրթության անցկացնելուն, դպրոցի պոլիտեխնիկացմանը, անգրագիտության և կիսագրագիտության վերացմանը Օգնում են դպրոցների համար տաք նախաճաշ և ճաշեր կազմակերպելուն:

գ) Աջակցում են կարմիր անկյուններ կազմակերպելուն, ռադիոֆիկացիայի, գրադարանի ստեղծելուն, կինոպատարկմանը և լրագրների ու ժուռնալների տարածմանը:

դ) Միջոցառումներ են անցկացնում կոլտնտեսականների բնակարանային — կենցաղային պայմանների

տարբերակելու, հսկում են սանիտարական կանոնների և միջոցառումների կատարելու վրա, վորոնք նախազգուշացնում են վարակիչ հիվանդությունները:

ժե) Գործնական ոգնություն են ցույց տալիս կոլտնտեսությունների վարչություններին ու կոոպերացիային հասարակական սննդի, մանկապարտեզների, ոջախների և հրապարակների կազմակերպելում:

17. Կազմակերպում են ընտրողների նակազների կատարման ստուգում, այդ գործում ներգրավելով կոլտնտեսականների լայն մասսաներին:

Գյուղխորհրդի հանձնարարությամբ նակազների կատարման մասին ընտրողների առաջ դրած իրենց աշխատանքի և խորհրդի աշխատանքի հաշվետվություն են ունենում:

## III ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

1. Պատգամավորական խմբակներն իրենց աշխատանքը տանում են գյուղխորհրդի անդամների ու խորհրդային ակտիվի դերի և պատասխանատվության ուժեղացման և բարձրացման հիման վրա՝ կոլտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման և նրանց կողմից բոլոր գյուղատնտեսական աշխատանքների և պետական պարտավորությունների իր ժամանակին կատարելու համար:

2. Պատգամավորական խմբակներն իրենց աշխատանքը տանում են ըստ պլանի, վորը կազմված է համաձայն այն գյուղխորհրդի և կոլտնտեսությունների պլանների, վորոնցում նրանք կազմակերպված են:

3. Պատգամավորական խմբակները հասարակական վերահսկողություն են կազմակերպում՝ կոլտնտեսությունների և կոլտնտեսությունների վարչությունների կողմից գյուղխորհրդի վորոշումները իր ժամանակին կատարելու վրա:

Գյուղխորհուրդներում կոլտնտեսությունների զեկուցումները դնելու ժամանակ՝ անպայման լսվում են նույնպես համապատասխան պատգամավորական խմբակի և խորհ – կազմակերպիչի կից զեկուցումը:

4. Իրենց աշխատանքներում պատգամավորական խմբակները ամուր կապ են հաստատում գյուղխորհուրդների սեկցիաների հետ այն հարցերի վերաբերմամբ՝ վորոնք վերաբերվում են սեկցիաների գործունեության բնագավառին, նրանցից ստանալով անհրաժեշտ ոգնություն և ցուցմունքներ:

5. Պատգամավորական խմբակները վոչ պակաս ամիսը մեկ անգամից, միասնական խորհրդային որը, քննություն են առնում աշխատանքի հերթական հարցերը և ստուգում են իրենց նախորդ նիստի հանած վորոշումների կատարումը:

6. Իրենց խնդիրները կատարելու համար պատգամավորական խմբակները.

ա) Գյուղխորհրդի հանձնարարությամբ և իրենց նախաձեռնությամբ կոլտնտեսությունների, բրիգադների և ապրանքային ֆերմաների աշխատանքի մասսայական ստուգումն են կատարում:

բ) Լսում են կոլտնտեսությունների ղեկավարների, բրիգադիրների և մյուս աշխատակիցների զեկուցումները և առաջարկություն են մտցնում կոլտնտեսային շինարարության բոլոր հարցերի վերաբերմամբ, վորոնք կյանքի մեջ կիրառում է հենց ինքը խմբակը և կոլտնտեսության վարչությունը:

գ) Կոլտնտեսության վարչության հետ տարաձայնություն յեղած դեպքում խմբակը առաջարկությունը մտցնում է գյուղխորհրդի հաստատության:

դ) Սիստեմատիկ ստուգում է կատարում կոլխոզ

ների և բրիգադների միջև սոցմրցման պայմանագրերը և պարտավորությունները:

ժե) Իրենց կազմից ընտրում են բրիգադիրներ, հըսկիչ պոստեր, վորակի տեսչություններ և այլն, ամեն անգամ նրանց հատուկ հանձնարարություն տալով՝ տարվող աշխատանքում:

7. Մեքենա-տրակտորային կայանի կողմից ըսպասարկվող կոլտնտեսությունների պատգամավորական խմբակները, վճռական պայքար են մղում ՄՏԿ քաղբաժնի կողմից կոլտնտեսություններին տրված ցուցմունքները կյանքի մեջ մտցնելու և ամուր կապ են ստեղծում ՄՏԿ և կոլտնտեսությունների պատգամավորական խմբակների հետ, միջոցներ են ձեռք առնում՝ ՄՏԿ և կոլտնտեսությունների կողմից՝ կոլտնտեսականների արտադրական և տեխնիկական օգնություն, կոլտնտեսություններին անհրաժեշտ բանուժ մատակարարելու վերաբերմամբ պարտավորությունները կատարելը ապահովելու համար և այլն:

8. Պատգամավորական խմբակները չեն խառնվում կոլտնտեսությունների վարչությունների և բրիգադիրների օպերատիվ-տնտեսական աշխատանքներում, բայց նրանց հետ համահավասար գյուղխորհրդի առաջ պատասխանատվություն են կրում՝ կոլտնտեսությունների կողմից նրանց արտադրական պլանների, պետական բոլոր պարտավորությունների և մեքենա-տրակտորային կայանների հետ կնքված յերկկողմանի պայմանագրերի, անտառային և մյուս տնտեսական կազմակերպությունների հետ ունեցած պայմանագրերի կատարման համար:

9. Պատգամավորական խմբակների և խորհկազմակերպությունների աշխատանքը ղեկավարում է գյուղական խորհուրդը, խմբակների և խորհկազմակերպությունների ղեկավարների խորհրդակցություն



հրավիրելու, տեղերում նրանց աշխատանքները ստուգելու, հրահանգելու, գյուղխորհրդի նիստերում նրանց աշխատանքի մասին զեկուցումներ տալու և նրանց ամբողջ աշխատանքում անմիջական կենդանի օգնություն ցույց տալու միջոցով:

---

ՀՍՍՌ-Арм
ՀՀ Ազգային գրադարան
NL0205928

30.575

35-1
a828

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР